# ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ԵՔ-ԲՄԽԱԾՁԲ-22/66»

ք. Երևան «03» «11» 2022թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Ի. Օսիպյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Կապիտալ Դիզայն» ՍՊԸ**-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Է.Դավթյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում **Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքների** կատարման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները ներկայացված են նախագծանախահաշվային փաստաթղթերում:

2.4.5 Եթե սույն պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կատարողը սույն պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու

կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **2045000 (երկու միլիոն քառասունհինգ հազար)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում՝ վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում

նախատեսված գումարի **1 (մեկ)** տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի **0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական)** տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի **0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական)** տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

---

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել, քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է ___ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

***7.15 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի աշխատակազմը:***

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| | |
|---|---|
| **Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
| Երևանի քաղաքապետարան | **«ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ** |
| ք. Երևան, Արգիշտի փող. 1 | **ք.Երևան,Դավթաշեն 4-րդ թաղ., 32շ., 45բն.** |
| Կենտրոնական գանձապետարան | **« ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ** |
| ՀՎՀՀ 02593108 | **Հ/Հ 220563332059000** |
| ՀՀ 900052473312 | **ՀՎՀՀ 00149653** |
| Ի. Օսիպյան------------------------------ | **Է.Դավթյան** |
| (ստորագրություն) | **(ստորագրություն)** |
| Կ.Տ. | **Կ.Տ.** |

Հավելված N 1
« 03 » « 11 » 2022 թ. կնքված
«ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-22/66» ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/Հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Գնման առարկայի անվանումը | տեխնիկական բնութագիրը | Չ/Մ | միավոր գինը | ընդհանուր գինը | ընդհանուր քանակը | կատարման հասցեն | կատարման ժամկետը |
| 5 | 71241200/1076 | Բակային տարածքների, խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում/Էստոնական 12 շենքի բակ/ | Աջափնյակ վարչական շրջանի բակային տարածքների, խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների համար առաջադրվում է.<br>1. Կազմել տեխնիկական եզրակացություն բակային տարածքի փաստացի իրավիճակի մասին<br>Տեխնիկական եզրակացությունում արտահայտել.<br>·Հիմնանորոգվող տարածքի ելակետային տվյալներ<br>· Հիմնանորոգվելիք զբոսայգու առկա վիճակը:<br>· Հարակից տարածքում անցնող գազատարի, էլեկտրալարերի և ջրատար խողովակների առկայության մասին տեղեկատվությունը:<br>· Հարակից կանաչապատ տարածքի պահպանման մասին տեղեկատվությունը:<br>· Զբոսայգում նախատեսվող արտաքին լուսավորության հենասյուների փոխարինման մասին առաջարկությունններ:<br>· Զբոսայգում նախատեսվող նստարանների պատրաստման և տեղադրման մասին առաջարկությունններ: | դրամ | 115 000 | 115 000 | 1 | Արա Սարգսյան 5 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրը ներառյալ |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 6 | 71241200/1077 | Բակային տարածքների, խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում/Հալաբյան 15 շենքի բակ/ | · Զբոսայգում նախատեսվող աղբամանների տեղադրման մասին առաջարկություններ:<br>· Զբոսայգում նախատեսել ճեմուղիների հին գեղարվեստական բետոնե սալիկների փոխարինում նորով՝ հաշվի առնելով գունային և պատկերային ամբողջական տեսքը /դիզայներական լուծումներ/:<br>· Բարեկարգման աշխատանքների ծավալների և օգտագործման նյութերի մասին առաջարկություններ:<br>· Շահագործման ընթացքում իրականացված բոլոր տիպի լրացումների և փոփոխությունների առաջարկություններ:<br>2. Տեխնիկական եզրակացության արդյունքներին համաձայն ներկայացնել<br>ա/ Ներկայացնել ուղղաձիգ նշահարման հատակագիծ<br>բ/ Զբոսայգու տարածքի բարեկարգման և հիմնանորոգման աշխատանքների էսքիզ-նախագիծ՝ նախնական համաձայնության:<br>գ/ Զբոսայգու տարածքի բարեկարգման և | դրամ | 190 000 | 190 000 | 1 | Արա Սարգսյան 5 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրը ներառյալ |
| 7 | 71241200/1078 | Բակային տարածքների, խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում/Հալաբյան 24,26 շենքերի բակ/ | հիմնանորոգման աշխատանքների թերությունների ակտ՝ նախնական համաձայնության:<br>դ/ Առաջադրանքի համաձայն կազմել զբոսայգու տարածքի բարեկարգման և հիմնանորոգման նախագծա-նախահաշվային աշխատանքների փաստաթղթեր:<br>ե/ Նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն: | դրամ | 190 000 | 190 000 | 1 | Արա Սարգսյան 5 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրը ներառյալ |
| 8 | 71241200/1079 | Բակային տարածքների, խաղահրապարակների հիմնանորոգման | 3. Նախագծերը ներկայացնել 7 օրինակից,<br>4. Նախագծերը ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով | դրամ | 190 000 | 190 000 | 1 | Արա Սարգսյան 5 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրը ներառյալ |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում/Հալաբյան 7 շենքի բակ/ | 5. Ծավալաթերթ-նախահաշիվը ներկայացնել նաև ռուսերեն լեզվով;<br>6. Արտաքին լուսավորության ցանցի անցկացման աշխատանքների նախագիծն ու նախահաշիվը ներկայացնել առանձին<br>7. Նախագծա–նախահաշվային փոստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել Երևանի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի Կոմունալ տնտեսության և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման բաժնի հետ:<br>8. Աշխատանքների վճարումը կիրականացվի դրական փորձաքննության եզրակացությունը ստանալուց հետո: | | | | | | |
| 9 | 71241200/1080 | Բակային տարածքների, խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում/Լենինգրադյան 24 շենքի բակ/ | | դրամ | 190 000 | 190 000 | 1 | Արա Սարգսյան 5 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրը ներառյալ |
| 10 | 71241200/1081 | Բակային տարածքների, խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում/Էստոնական 11,13 շենքերի բակ/ | | դրամ | 150 000 | 150 000 | 1 | Արա Սարգսյան 5 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրը ներառյալ |
| 11 | 71241200/1082 | Բակային տարածքների, խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում/Էստոնական 7,9 շենքերի բակ/ | | դրամ | 190 000 | 190 000 | 1 | Արա Սարգսյան 5 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրը ներառյալ |
| 12 | 71241200/1083 | Բակային տարածքների, խաղահրապարակների | | դրամ | 150 000 | 150 000 | 1 | Արա Սարգսյան 5 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրը |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում/Շինարարների 13 շենքի բակ/ | | | | | | | ներառյալ |
| 13 | 71241200/1084 | Բակային տարածքների, խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում/Ֆուչիկի 2 շենքի բակ/ | | դրամ | 150 000 | 150 000 | 1 | Արա Սարգսյան 5 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրը ներառյալ |
| 14 | 71241200/1085 | Բակային տարածքների, խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում/Բաշինջաղյան 1-ին նրբ.7 շենքի բակ/ | | դրամ | 150 000 | 150 000 | 1 | Արա Սարգսյան 5 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրը ներառյալ |
| 15 | 71241200/1086 | Բակային տարածքների, խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում/Մարգարյան 2-րդ նրբ.1/1 շենքի բակ/ | | դրամ | 75 000 | 75 000 | 1 | Արա Սարգսյան 5 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրը ներառյալ |
| 16 | 71241200/1087 | Բակային տարածքների, խաղահրապարա | | դրամ | 75 000 | 75 000 | 1 | Արա Սարգսյան 5 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | կների հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում/Շիրազի 50 շենքի բակ/ | | | | | | | օրվանից 45-րդ օրը ներառյալ |
| 17 | 71241200/1088 | Բակային տարածքների, խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում/ Բաշինջաղյան 1-ին նրբ.11 շենքի բակ/ | | դրամ | 115 000 | 115 000 | 1 | Արա Սարգսյան 5 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրը ներառյալ |
| | | | | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 18 | 71241200/1089 | N 100 դպրոցի մինի ֆուտբոլի դաշտի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում | 1.Նախագծերը մշակել գործող նորմերի պահանջների համաձայն<br>2.Նախահաշիվները կազմել ներկա գործող գներով<br>3.Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո այն համաձայնեցնել պատվիրատուի հետ<br>4.Նախագծերը ներկայացնել 7 օրինակից<br>5.Նախագծերը ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով<br>6. Ծավալաթերթ-նախահաշիվը ներկայացնել նաև ռուսերեն լեզվով;<br>7.Արտաքին լուսավորության ցանցի անցկացման աշխատանքների նախագիծն ու նախահաշիվը ներկայացնել առանձին<br>8.Աշխատանքների դիմաց վճարումը կատարվելու է փորձաքննության դրական եզրակացության տրամադրվելուց հետո | դրամ | 115 000 | 115 000 | 1 | Արա Սարգսյան 5 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրը ներառյալ |
| | | | ԸՆԴԱՄԵՆԸ | | | 2045000 | | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02593108
ՀՀ 900052473312

Ի. Օսիպյան_______________
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
**«ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ**
**ք.Երևան,Դավթաշեն 4-րդ թաղ., 32շ., 45բն.**
**« ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ**
**Հ/Հ 220563332059000**
**ՀՎՀՀ 00149653**

**Է.Դավթյան**
**(ստորագրություն)**
**Կ.Տ.**

Հավելված N 2
«03» «11» 2022 թ. կնքված
«ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-22/66» ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Աշխատանքներ | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չ/հ | Գնման առարկայի անվանումը | գնումների պլանով նախ. միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | |
| | | | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը /ՀՀ դրամ/ |
| 5 | Բակային տարածքների, խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում/Էստոնական 12 շենքի բակ/ | 71241200/1076 | | | | | 115000 | 115000 | 115000 |
| 6 | Բակային տարածքների, խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում/Հալաբյան 15 շենքի բակ/ | 71241200/1077 | | | | | 190000 | 190000 | 190000 |
| 7 | Բակային տարածքների, խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում/Հալաբյան 24,26 շենքերի բակ/ | 71241200/1078 | | | | | 190000 | 190000 | 190000 |
| 8 | Բակային տարածքների, խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում/Հալաբյան 7 շենքի բակ/ | 71241200/1079 | | | | | 190000 | 190000 | 190000 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **9** | Բակային տարածքների, խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում/Լենինգրադյան 24 շենքի բակ/ | 71241200/1080 | | | | | 190000 | 190000 | 190000 |
| **10** | Բակային տարածքների, խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում/Էստոնական 11,13 շենքերի բակ/ | 71241200/1081 | | | | | 150000 | 150000 | 150000 |
| **11** | Բակային տարածքների, խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում/ Էստոնական 7,9 շենքերի բակ/ | 71241200/1082 | | | | | 190000 | 190000 | 190000 |
| **12** | Բակային տարածքների, խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում/Շինարարների 13 շենքի բակ/ | 71241200/1083 | | | | | 150000 | 150000 | 150000 |
| **13** | Բակային տարածքների, խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում/Ֆուչիկի 2 շենքի բակ/ | 71241200/1084 | | | | | 150000 | 150000 | 150000 |
| **14** | Բակային տարածքների, խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում/Բաշինջաղյան 1-ին նրբ.7 շենքի բակ/ | 71241200/1085 | | | | | 150000 | 150000 | 150000 |
| **15** | Բակային տարածքների, խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում/Մարգարյան 2-րդ նրբ.1/1 շենքի բակ/ | 71241200/1086 | | | | | 75000 | 75000 | 75000 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| *16* | Բակային տարածքների, խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում/Շիրազի 50 շենքի բակ/ | 71241200/1087 | | | | | 75000 | 75000 | 75000 |
| *17* | Բակային տարածքների, խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում/ Բաշինջաղյան 1-ին նրբ.11 շենքի բակ/ | 71241200/1088 | | | | | 115000 | 115000 | 115000 |
| *18* | N 100 դպրոցի մինի ֆուտբոլի դաշտի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում | 71241200/1089 | | | | | 115000 | 115000 | 115000 |
| Ընդամենը | | | | | | | | | **2045000** |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02593108
ՀՀ 900052473312

Ի. Օսիպյան-----------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
**«ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ**
**ք.Երևան,Դավթաշեն 4-րդ թաղ., 32շ., 45բն.**
**« ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ**
**Հ/Հ 220563332059000**
**ՀՎՀՀ 00149653**

**Է.Դավթյան**
**(ստորագրություն)**
**Կ.Տ.**

Հավելված 3
« » « » 2022 թ. կնքված
«ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-22/66» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

____________________________

____________________________

գտնվելու վայրը _____________

հհ _________________________

հվհհ _______________________

Պատվիրատու

____________________________

____________________________

գտնվելու վայրը _______________

հհ___________________________

հվհհ_________________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

________________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

____________________________
ստորագրություն

____________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

____________________________
ստորագրություն

____________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

*Հավելված 3.1*
« » « » 2022 թ. կնքված
«ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-22/66» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _________________________ -ին կնքված N _____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ___________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____________________________
ազգանուն, անուն
_____________________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____________________________
ազգանուն, անուն
_____________________________
ստորագրություն

acba

02 նոյեմբերի 2022թ.
ք. Երևան

Թիվ 055-816

# ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
# ԹԻՎ 22 55 40 311987/6

*(որակավորման ապահովում)*

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից թիվ «ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-22/66» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) կողմից թիվ «ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-22/66» պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել 405.000 (չորս հարյուր հինգ հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար) Պահանջը ստանալուց 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի կողմից նշված հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է տրման օրվանից մինչև 25/12/2022թ.-ին հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ, սակայն ոչ ուշ, քան 19 մայիսի 2023թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրն իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) N «ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-22/66» ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

2) Բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա

ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը` սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե.

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին,

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Սայաթ-Նովա» մասնաճյուղի կառավարիչ Է. Հարությունյան

*Կատարող`*
*Տաթևիկ Մարտիրոսյան*
*Հեռ.` 010 31-88-88 (ներքին` 7089)*

acba

02 նոյեմբերի 2022թ.
ք. Երևան

Թիվ 055-815

# ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
# ԹԻՎ 22 55 40 311987/5

*(պայմանագրի ապահովում)*

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև թիվ «ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-22/66» պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին անվերապահորեն վճարել 270.000 (երկու հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար) Պահանջը ստանալուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի կողմից նշված հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է տրման օրվանից մինչև 25/12/2022թ.-ին հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, սակայն ոչ ուշ, քան 19 մայիսի 2023թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրն իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) N «ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-22/66» պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

2) Բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե.

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին,

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Սայաթ-Նովա» մասնաճյուղի կառավարիչ Է. Հարությունյան

*Կատարող՝*
*Տաթևիկ Մարտիրոսյան*
*Հեռ.՝ 010 31-88-88 (ներքին՝ 7089)*